Հայաստանում Քրիստոնեությունը Կրոն
հռչակելու 1700-ամյակին նվիրված

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏԱԿԱՆ ԿՐՈՆ ՀՌՉԱԿԵԼՈՒՆ ԱՌՆՉՎՈՂ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՋ

Վ. Մ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

III դ. 2-րդ կեսին Հայաստանը շարունակում էր ընդդիմակայել Սասանյան պետությանը, պահպանելով իր ներքին ինքնուրույնությունն ու անկախությունը։ Սասանյան սահմանները, հենելով Հայոց և Պարսից երկրների դարավոր դրացիության, կրոնական աղերսակցության փաստից, չէին Հայաստանը կախման մեջ դնել Պարսկաստանից և վերածել Առաջավոր Ասիայում իրենց նվաճողական ծրագրերին սատարող գործոնի։ Սակայն հայ ժողովուրդը կարողացավ պահպանել իր քաղաքական և հոգևոր ինքնությունը, անհավասար պայքարի մեջ մտնելով Սասանյաններին։ Նրանց պետական գաղափարախոսությունը դարձած զրադաշտական կրոնի դեմ։ Սահմանված պայմաններում, երբ արևելքում Սասանյանները պատերազմում էին Միջին Ասիայի Արշակունիների Քուշանական պետության և արևմուտքում՝ Հռոմեական կայսրության դեմ, Պարսկաստանի համար ավելի էր կարևորվում Հայաստանի ռազմաքաղաքական նշանակությունը։ Հայերին կախման մեջ դնելու համար առաջին հերթին անհրաժեշտ էր մեջտեղից վերացնել հայոց Արշակունիներին։ Այդ նպատակադրումով պարսից Շապուհ I արքան (239—272) նյութեց հայոց թագավոր Խոսրով I Արշակունու սպանությունը։ Պատմական ավանդությունը արյունոտ այդ ոճրի հեղինակ է համարում Գրիգոր Լուսավորչի հորը՝ Անակին, նրան ներկայացնելով Խոսրով I Արշակունու տոհմակից՝ պարթև Արշակունիներից[1]։ Ընդսմին Մովսես Խորենացին հավաստում է, որ Շապուհ I արքան այնքան մեծ նշանակություն էր տալիս հայոց թագավորի սպանությանը, որ նույնիսկ Սասանյանների անհաշտ թշնամիներին՝ պարթև Արշակունիներին խոստացավ թագ ընծայել և նրանց վերադարձնել բուն պարթևական աշխարհը[2]։ Ագաթանգեղոսը շեշտում է նաև հայոց Խոսրով թագավորի սպանողին արյաց արքայի կողմից թագադրելու փաստը[3]։ Այս վկայությունը թերևս պատմական վերհուշ է այն իրողության, որ Սասանյանները նպատակադրվել էին հայ Արշակունիների փոխարեն Հայաստանում թագավոր կարգել պարթև Արշակունիների Սուրենյան Պահլավի տոհմաճյուղից սերող որևէ մեկին, որը պետք է դառնար իրենց հլու կամակատարը։

Որպես Արշակունի, Անակը, բնականաբար, կարող էր վստահություն ներշնչել հայ Արշակունիներին։ Եղիշե պատմիչը նրան համարում է հայոց թագավոր Խոսրով II-ի հորեղբայր[4]։ Պատմական ավանդությունը հայոց թագավորի վստահությունն Անակի հանդեպ աղերսակցում է նաև այն փաստին, որ Անակը Հայաստան ժամանեց իբրև տարամերժյալ ու Սասանյաններից հալածված, իսկ հայոց թագավորը նույնիսկ զորաջոկատ ուղարկեց՝ պարսից արքայի կողմնակիցներից նրան պաշտպանելու համար։

---

1 Տե՛ս Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, աշխ. Գ. Տեր-Մկրտչեան և Ստ. Կանայեանց, Տփղիս, 1909, Բ, էջ 19, Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, աշխ., Մ. Արեղեանի և Ս. Յարութիւնեանի, Տփղիս, 1913, II, ՀԴ, էջ 211։

2 Մովսես Խորենացի, II, ՀԴ, էջ 211։

3 Ագաթանգեղոս, Բ, էջ 19։

4 Եղիշէի Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, աշխ. Ե. Տեր-Մինասյանի, Ե., 1957, Գ, էջ 72։

Կրոնական ջերմեռանդությամբ տոգորված ավանդությունը այնուհետև Անակին տեղափոխում է այն վայրը, ուր ամփոփված էին Թադեոս առաքյալի նշխարները, և որտեղ կատարվում է «զյղութիւն մօր սորոյ և մեծի մեռոյ Լուսաւորչին»։ Ընդ որում վերջինս դրա շնորհիվ ստանում է Թադեոս առաքյալի շնորհը, լրացնելով նրա հոգևոր գործերի պակասը[5]։ Ավանդախառն այս պատմության մի տումն է Գրիգոր Լուսավորչին դիտել որպես Թադեոսի ու Բարդուղիմեոսի բնական հաջորդ և նրանց գործի շարունակող։ Նույն նկատառումով Մովսես Խորենացին նշում է, որ Անակն ու իր հարազատները երկու տարի մնացել են Արտազի նշված վայրում։ Պատմագիրն անշուշտ կամենում է այդ կերպ հիմնավորել նույն վայրում Գրիգոր Լուսավորչի մոր հղիանալու մասին ավանդազրույցը[6], որը սակայն տեղ չի գտել Ագաթանգեղոսի երկասիրության մեջ, անշուշտ, որոշակի նկատառումով։ Ագաթանգեղոսը հակված է Հայաստանի առաջին լուսավորիչ համարել Գրիգորին։ Պատմագիրը նշում է, որ Անակը Հայաստան ժամանելով ասրվել է Ուտիք նահանգի Խաղխաղ քաղաք՝ հայոց թագավորի ձմեռանոց, որտեղ նրան ընդունել է Խոսրով I-ը, իսկ 2—3 ամիս հետո վերջինիս հրամանով ջրահեղձ է արվել Արաքսում[7]։

Անակի և նրա մերձավորների՝ Հայաստան ժամանելու շուրջ հյուսված պատումներն ըստ երևույթին արտացոլք են դեպի Հայաստան պարթև ազնվականների գաղթի, որը, համաձայն Դիոն Կասսիոսի և Մովսես Խորենացու, անցկ է ունեցել հայոց Տրդատ II արքայի օրոք[8]։ Ըստ ավանդական պատմության, Գրիգոր Լուսավորիչը սերել է պարթև Արշակունիներից։ Նրպատակն է՝ նրա տոհմը, ի զուգակշիռ հայ Արշակունիների, ներկայացնել թագազարմ տան լուսապսակով։

Արտազում Անակի գտնվելու մասին ավանդությունը յուրովի է արտացոլված Հովհան Մամիկոնյանի երկում. այս հեղինակը Անակին Արտաղից տեղափոխում է Գամիրքի (Կապադովկիայի) Կեսարիա քաղաք։ Պատմագիրը ոչինչ չի ասում Արտաղում Անակի կնոջ հղիանալու մասին և հավաստում է, որ Կեսարիայում Գրիգորին խնամում էր Բուրտար անունով մեծահարուստի զուգակից Սոփին[9]։ Հովհան Մամիկոնյանի այս հավելումները Խորենացու հաղորդմանը, ըստ երևույթին, հետևանք են նրանց կողմից նույն սկզբնաղբյուրը յուրովի օգտագործելու փաստ։ Վերջինս, անշուշտ, ունեցել է պատմական կորիզ, որի շուրջ հյուսվել են վկայաբանական պաճուճանքները։ Անակի և Գրիգորի հետ առնչվող պատումները երիտնազարդված են նաև Ագաթանգեղոսի երկում, որի համաձայն Խոսրով I-ը սպանությունից առաջ հրամայում է գլխովին ոչնչացնել Անակի գերդաստանը։ Այդ տունից վրկվում են միայն երկու մանուկներ, որոնցից մեկին փախցնում են Պարսկաստան, իսկ մյուսին՝ «ի կողմանս Յունաց»[10]։ Ինչպես տեսնում ենք, պատմագիրները չեն անտեսում Արևմուտքից Գրիգոր Լուսավորչի՝ Հայաստան ժամանելու պատմական իրողությունը, անշուշտ, այն աղերսակցելով նրա պարթևական ծագման վերաբերյալ ավանդազրույցին։ Բայց Գրիգորի պարթևական ծագումը պատմական հիմք չունի[11]։

---

5 Մովսես Խորենացի, II, ՀԴ, էջ 211—212, տե՛ս նաև Յովհան Մամիկոնեան, Պատմութիւն Տարօնոյ, աշխ., Ա. Արրահամյանի, Ե., 1941, էջ 68։

6 Հմմտ. Г. Халатянц, Армянские Аршакиды в «Истории Армении» Моисея Хоренаци, I, М., 1903, с. 148.

7 Ագաթանգեղոս, Բ, էջ 21։

8 Տե՛ս Հովսեպոս Փլավիոս և Դիոն Կասսիոս, աշխ. Ս. Կոկյաշարյանի, Ե., 1976, էջ 221, Մովսես Խորենացի, II, ՀԴ, էջ 209—210, Հ. Մանանդյան, Երկեր, Բ, Ե., 1978, էջ 93։

9 Յովհան Մամիկոնեան, էջ 69։

10 Ագաթանգեղոս, Բ, էջ 23—24։

11 M. Chaumont, Sur l'origine de Saint gregoire d'Arménie (Le Museon Revue d'Etudes orientales, t. 102, fasc. 1—2, Louvain, 1989, p. 129—130).

Ագաթանգեղոսի երկասիրության հունարեն խմբագրության («Վարքի») պարունակած տեղեկությունների համաձայն, Տրդատ III-ի մոտ ծառայության մտած Գրիգորը նրան ասում է, որ ինքը Հայոց աշխարհի ազնվականներից է[12]։ Ըստ այդմ, կասկածելի է դառնում Գրիգոր Լուսավորչի պարթևական ծագումը։ Ն. Ադոնցի կարծիքով Գրիգոր Լուսավորիչը սերում էր Փոքր Հայքի հռոմեացի ազնվական գերդաստանից[13]։ Տրդատ III-ի արքունիքում Գրիգորի ծառայության փաստն ինքնին կողմնակի ապացույց է նրա հայկական ծագման մասին, որի համար հիմք կարող է ծառայել նաև Հայաստանում Գրիգորի քարոզչական գործունեությունը և ժողովրդին իր հետևից տանելու փաստը։ Անշուշտ, հունարեն կամ որևէ այլ լեզվով քարոզչության դեպքում Հայաստանում նոր կրոնը սերմանողի գործունեությունը չէր ստանա այնպիսի լայնածավալ ու զանգվածային բնույթ, որպիսին տեսնում ենք Գրիգորի քարոզչության պարագայում։ Ամենայն հավանականությամբ, Գրիգորը սերում էր Հայաստանի տոհմիկ գերդաստանից և կրթվելով Հռոմեական կայսրության կազմի մեջ գտնվող Կեսարիա քաղաքում, վերադարձել էր Հայաստան հայ-հռոմեական մերձեցման ժամանակ և ծառայության էր մտել Տրդատ III-ի արքունիքում։

Հայկական սկզբնաղբյուրների հավաստմամբ, Գրիգոր Լուսավորիչը ծնվել է Խոսրով I-ի սպանությունից փոքր-ինչ հետո։ Սեբեոսի վկայության համաձայն, այդ սպանությունը Անակ Պարթևը կատարել է Սասանյան թագավոր Արտաշիրի (224—241) գահակալության 21-րդ և Հռոմի Դիոկղետիանոս կայսեր (284—305) իշխելու չորրորդ տարում[14]։ Հակասական այս տեղեկությունը չի հաստատվում այլ սկզբնաղբյուրներով։ Շշգրտելու կարիք ունի նաև Ագաթանգեղոսի հաղորդումը, որի համաձայն, Տրդատ III-ը հոր սպանության ժամանակ մանուկ էր[15]։ Դուրս է գալիս, որ նա դահակալել է դեռատի հասակում, ինչը հակասում է սկզբնաղբյուրների տվյալներին։ Բայց այս տեղեկությունը ունի նաև պատմական հենք, մասնավանդ, երբ այն համադրում ենք Մովսես Խորենացու բնձեռած տվյալներին, որոնց համաձայն, Խոսրով I-ը սպանվել է Հռոմի Վալերիանոս կայսեր ժամանակ[16]։ Վերջինս գահակալել է մինչև 260 թվականը, հետևաբար, Խոսրով I-ի սպանությունն ընկնում է մինչև այդ թվականը։ Եվ որովհետև, Ագաթանգեղոսի վերոնշյալ տեղեկության համաձայն, հոր սպանության պահին Տրդատը մանկահասակ էր, ուստի նա պետք է ծնված լիներ մոտավորապես 4—5 տարի առաջ, հավանաբար 261 թ.։

Հայտնի է, որ Տրդատ III-ը գահակալել է Հռոմեական կայսրության զորակցությամբ, և Մծբինում 298 թ. կնքված հռոմեա-պարսկական 40-ամյա պայմանագրով Հայաստանը, իբրև Հռոմի դաշնակից, մտել է նրա հովանավորության տակ։ Նույն ժամանակ Դիոկղետիանոս կայսեր հրամանով հալածանքներ էին սկսվել քրիստոնյաների դեմ։ Այդ հալածանքները ունեին նաև քաղաքական երանգներ և կարող էին շոշափել հայ-հռոմեական հարաբերությունները, քանի որ Հայաստանում արդեն առկա էր կազմակերպված քրիստոնեական համայնք, որը հովանավորում էր հալածված քրիստոնյաներին։ Իբրև Հռոմի դաշնակից, Տրդատ III-ը պետք է հետևեր կայսեր քրիստոնեահալած ուղեգծին, իհարկե քանի դեռ առկա էր հայ-հռոմեական ռազմաքաղաքական մերձակցությունը։ Այս առումով ուշագրավ է հետևյալ փաստը։ Երեզ (Երզնկա) սվանում Անահիտի մեհյա-

---

12 Տե՛ս Ագաթանգեղոսի Պատմության հունարեն նորահայտ խմբագրությունը (այսուհետև՝ Վարք)։ Հունարենից թարգմ. Հր. Բարթիկյանը (Էջմիածին, 1966, էջ 32)։

13 N. Adontz, Gregoire l'Illuminateur et Anak le parthe [Revue des Etudes Armeniennes (REA), VIII, 1928, p. 244—245].

14 Պատմութիւն Սեբէոսի, աշխ. Գ. Արզատյանի, Եր., 1979, էջ 58։

15 Ագաթանգեղոս, Գ, էջ 24։

16 Մովսես Խորենացի, II, ԼԳ, էջ 210, ԼԴ, էջ 212։

նին ծաղկեպսակներ, ծառերի ոստեր նվիրարերելուց հրաժարվող Գրիգորին Տրդատ արքան ասում է, որ Դիոկղետիանոս կայսրը, որ տիրում է համայն աշխարհը, նույնպես պաշտում է հեթանոս աստվածներին[17]։ Ընդսսին, Տրդատ III-ը անմիջապես հաշվեհարդար չտեսավ Գրիգորի հետ, քանի որ հույս ուներ տարհամոզել նրան և դարձնել հեթանոսական կրոնին։ Այս փաստն անշուշտ վկայում է նրա հանդեպ արքայի ունեցած մեծ համարումի մասին։ Միաժամանակ, ինչպես կարելի է մակաբերել Ագաթանգեղոսի երկում եղած տվյալներից, Տրդատ III-ը որոշակի հետաքրքրություն է տածել քրիստոնեության նկատմամբ և կամեցել է Գրիգորի միջոցով վերահասու լինել այդ կրոնի էությանը։ Անշուշտ, հայոց հեթանոսաճաշակ թագավորը սովոր էր տեսնել, նույնիսկ շոշափել աստվածներին, զգալ բնության անմեկնելի երևույթները մարմնավորող նրանց զորությունը։ Ագաթանգեղոսը վկայում է, որ Տրդատ III-ը Գրիգորից պահանջում է իր առջև ցուցադրել Քրիստոս Աստծուն[18]։ Բայց Գրիգորը հասկանում էր, որ նոր կրոնը հայոց թագավորին կարող է շահագրգռել լոկ այն պարագայում, երբ վերջինս, ի դեմս քրիստոնեության, գտնի իր թագավորության հիմքերն ամրապնդող զորավոր միջոց։ Այս մասիս որոշ գաղափար է տալիս այն բանակռիվը, որ ծավալվեց Տրդատի ու Գրիգորի միջև, և որի ժամանակ վերջինս ջանում էր արքայի հեթանոս էությանը հասցնել պետականորեն քրիստոնեության օգտակար լինելու հանգամանքը։ Այդ նկատառումով նա շեշտեց, որ նոր կրոնը պատվիրում է, որպեսզի «ծառայք հնազանդ լիցին մարմնաւոր տերանց»[19]։

Պատմական ավանդությունը ջանացել է նաև Գրիգորին ներկայացնել առաքյալներին, հայոց Լուսավորչին արժանի լուսապսակով։ Նրա վարքը երփնազարդված է հրաշագործ երանգներով, որոնցից անշուշտ, զերծ չէ նաև մահապարտների արքունի բանտում՝ Խոր Վիրապում, Գրիգորի անցկացրած 13 տարիների, բարեպաշտ կնոջ կողմից նրա կերակրվելու վերաբերյալ ավանդազրույցը։ Կասկածից վեր է, որ քրիստոնեությունը հալածող Տրդատ թագավորը պետք է մեկուսացներ, բանտարգել աներ նոր կրոնի քարոզիչներին։ Գրիգորի բանտարգելությունը նրա կրած մյուս չարչարանքների մեջ սփակն է, որ իրական-պատմական հիմք ունի և տեղայնացված է, մյուսները վկայաբանական զրույցներ են, որոնք ինչ-որ չափով զտվել, բյուրեղացել են Ագաթանգեղոսի երկասիրության մեջ։ Ժողովրդական ավանդությունը լրացրել է Գրիգորի հրաշապատում վարքագրությունը։ Ս. Ադոնցի կարծիքով թագավորական հասարակ բանտը հնավանդ կրոնական պատկերացումների ազդեցությամբ դարձել է Վիրապ՝ ստանալով նոր բովանդակություն։ Ընդ որում, գրեթե նման ավանդազրույց էր հյուսվել Զրադաշտի շուրջը, որը պարսից արքայի հրամանով նետվել էր փոսի մեջ, ուր մի բարեպաշտ անձնավորություն ամեն օր հաց էր գցում[20]։ Հավանաբար, կրոնական այս հիշողությունը սնվել է ընդհանուր աղբյուրից, որը պետք է որոնել նաև մ. թ. ա. VIII դ. Հայաստանի հավատքում[21]։

Ավանդությունը Գրիգորի գործը դրոշմել է նրա գերմարդկային տառապանքների կնիքով, դրանց հաղորդելով առասպելական երանգներ։ Ընդսմին, Զրադաշտի վարքը նույնպես առավելագույնս հագեցած է առասպելներով, վկայաբանական հնարածո տարրերով[22]։ Գրիգորի և Տրդատի մա-

---

17 Վարք, էջ 32, Համա. նաև Ագաթանգեղոս, ե., էջ 31։

18 Ագաթանգեղոս, ե., էջ 37։

19 Նույն տեղում, ե., էջ 30—31։

20 Ն. Ադոնց. Հին հայոց աշխարհայացքը (Պատմական ուսումնասիրություններ, Փարիզ, 1948, էջ 271—272)։

21 Համա. В. Струве. Родина зороастризма (Советское востоковедение. V, М.—Л., 1948, с. 31).

22 J. Duchesne—Guillemin. La religion de l'Iran ancien, Paris, 1962, p. 140—142.

սին ավանդությունը հիշեցնում է նաև Դանիել մարգարեի վարքը[23]։ Գրիգորի չարչարանքների պատմությունն անշուշտ քրիստոնեության դեմ Տրդատ III-ի հարուցած հալածանքների վերհուշն է։ Քրիստոնյաների դեմ հայոց թագավորի խստաշունչ հրովարտակը պայմանավորված էր նաև հզորագույն հարևանների՝ Հռոմեական կայսրության և Սասանյան Պարսկաստանի հոգևոր-քաղաքական ազդեցությամբ։ Վերջիններիս հետ Տրդատ III-ը իր թագավորության սկզբնաշրջանում կամենում էր պահպանել բարեկամական հարաբերություններ քաղաքական և կրոնական ոլորտներում։ Ուշագրավ է, որ Գրիգորին բանտ նետելուց անմիջապես հետո Տրդատ արքան Հայաստանի բոլոր կողմերը ուղարկեց հատուկ հրովարտակ, որտեղ հավաստում էր իր հավատարմությունը ոչ միայն հայոց հեթանոսական աստվածներին, այլև ցանկալի էր համարում, որ հույների իմաստությունը հասնի «կայսրերի դաստակերտին»՝ Հայաստան և վերջինիս հանդեպ լինի հոգածություն նաև «ի մեր դիցախառն պարթևաց»[24]։ Հայոց թագավորը փաստորեն շեշտում էր հայ-հռոմեական դաշինքը, ինչպես նաև հայ-պարթևական հավատակցության փաստը, այն երկու ծանրակշիռ հանգամանքները, որոնց ազդեցությունից ձերբազերծվելը Հայաստանի համար հետզհետե դառնում էր քաղաքական անկախության երաշխիք։ Սակայն III դ. վերջին, երբ Մծբինի պայմանագրով խաղաղություն հաստատվեց ոչ միայն Հռոմի ու Պարսկաստանի, այլև վերջինիս և Հայաստանի միջև, Տրդատը չէր կարող հրաժարվել այդ հզոր հարևանների հետ հոգևոր-քաղաքական [illegible]ությունից, ինչն արտացոլվել է նաև Տիգրանակերտ քաղաքի [illegible] վրա նրա թողած արձանագրության մեջ։ Այդտեղ հայոց թագավորը դարձյալ հավաստում է իր բարեկամությունը թե պարսից թագավորի հանդեպ, նրան հորջորջելով «Աստված թագավոր թագավորաց» և թե Հռոմի կայսեր նկատմամբ[25]։ Ուստի, վերապահությամբ պետք է մոտենալ Ագաթանգեղոսի մի հաղորդմանը, ըստ որի Տրդատ Մեծը իր թագավորելու տարիներին հարաժամ կռիվներ է մղել Պարսից պետության դեմ[26]։ Այդ հաղորդումը վերաբերում է Տրդատ II-ին[27], որն իրոք, երկար տարիներ պատերազմներ է մղել Սասանյանների դեմ։ Նկատենք, որ հունարեն և արաբերեն «Վարքերում» դույզն իսկ ակնարկ չկա Տրդատ III-ի և պարսիկների միջև մղված կռիվների մասին։

Ագաթանգեղոսի երկը կոչված էր վեհացնել և հրաշագործության փաստակով ներկայացնել Գրիգորի կատարածը։ Վերջինս մարմնավորում էր քրիստոնեական հավատքը, որի առջև խոնարհվեց դիցապաշտ Հայաստանը։ Գրիգորի հրաշապատում վարքը, նրա կրած անհասարակ տանջանքները նպատակ ունեին ապացուցել, որ Քրիստոս Աստվածը բյուրապատիկ ավելի զորավոր է, քան հայոց թագավորի երկրպագած հեթանոսական աստվածները։

Հարկ է նշել նաև, որ Տրդատ Մեծի վերոհիշյալ հրովարտակը ուղղված էր Հայաստանի բոլոր խավերին՝ ազատներին, զորականներին, շինականներին[28]։ Այս փաստն ինքնին խոսուն վկայություն է Հայաստանում քրիստոնեության լայն տարածման մասին, հանգամանք, որը չէր կարող անտեսել հայոց թագավորը։ Հենց այդ իրողության շնորհիվ էր, որ Հռիփսիմյանց կույսերը հալածվելով Հռոմեական կայսրությունում, ապաստանեցին Հայաստանում։ Հռիփսիմյանց հետ աղերսակցվող ավանդությունը

---

23 Տե՛ս. D. Marchall Lang, Armenia: cradle of civilization, London, 1970, p. 156.

24 Ագաթանգեղոս, ԺԲ, էջ 73։

25 Հ. Մանանդյան, Բ, էջ 125։

26 Ագաթանգեղոս, ԺԲ, էջ 76։

27 Մ. Աբեղյան, Երկեր, Գ, Ե., 1968, էջ 188։

28 Ագաթանգեղոս, ԺԲ, էջ 76։

թեև հիմնականում ունի վկայաբանական բնույթ, սակայն այդտեղ առկա է նաև վավերական հենքը։ Անշուշտ, Հռիփսիմյանք պատմական անձ են[29], նրանց վարքագրությունը ստույգ արտացոլք է Հայաստանում քրիստոնեության դեմ կփրառած հալածանքների։ Սկզբնաղբյուրները հաղորդում են սարսափելի, հաճախ իրարամերժ տեղեկություններ Հռիփսիմյանց կույսերի մասին[30]։ Հռիփսիմյանց վկայաբանությունն, անշուշտ, ինքնուրույն ստեղծագործություն է և հետագայում ճոխացվել ու մուծվել է Ագաթանգեղոսի երկի մեջ։ Հետագայի հավելված է նաև Տրդատի քրոջ՝ Խոսրովիդուխտի տեսիլքը, որը նույնպես մուծվել է Ագաթանգեղոսի գործի մեջ։ Տեսիլքի համաձայն, արքայի քույրը վերահասու է եղել խոզակերպ դարձած Տրդատ արքային մարդակերպ դարձնելու միջոցին, այն է՝ խոր վիրապից Գրիգորին դուրս հանելուն։ Տեսիլքը թեև վավերական չէ, սակայն արտացոլում է այն իրողությունը, որ Գրիգորը բանտից ազատ է արձակվել Տրդատ III-ի քրոջ (հավանաբար նաև թագուհու) հորդորներով։ Այս փաստից հետևում է, որ Տրդատ Մեծի քույրն ու կինը նրանից ավելի վաղ են քրիստոնյա դարձել։ Թերևս նրանց ազդեցությամբ էր նաև, որ Տրդատը հակվեց քրիստոնեության կողմը[31]։ Ագաթանգեղոսի ավանդախառն վկայություններից հետևում է, որ մինչև Տրդատի քրիստոնյա դառնալը նոր կրոնը գավանել են ոչ միայն նրա կինն ու քույրը, այլև որոշ ազդեցիկ նախարարներ։ Այսպես, Խոսրովիդուխտի դաստիարակը՝ Ամատունյաց իշխան Օտան, նրա խնդրանքով մեկնում է Արտաշատ, որպեսզի Գրիգորին հանի բանտից[32]։ Ըստ հունարեն «Վարքի», այս իշխանը Գրիգորին բանտից հանելիս զրվատում է Քրիստոսին[33]։ Ավելին, ըստ մեկ այլ աղբյուրի, նախարարները թագավորի հետ մեկնում են Արտաշատ, որպեսզի դիմավորեն խոր վիրապից դուրս եկող Գրիգորին, ապա վեց օր ուենկնդրում են նրա հոգևորոգ քարոզները[34]։ Այս փաստերը վկայում են, որ Գրիգորին բանտից ազատ արձակելը կատարվել է նաև նախարարների կամակցությամբ։ Դրանք նաև հիմք են տալիս կարծելու, որ նախքան պետական կրոն հռչակվելը, քրիստոնեությունը մուտք էր գործել նաև հայոց արքունիք։ Գուցե դրա հետ է առնչվում հայոց մայրաքաղաքում Հռիփսիմյան կույսերի նահատակության փաստը։ Սակայն հնարավոր չէ նրանց և Գրիգոր Լուսավորչի գործունեության միջև աղերսներ գտնել։ Սկզբնաղբյուրները ոչինչ չեն հաղորդում Գրիգորի և Հռիփսիմյանց համագործակցության մասին։ Ըստ Ագաթանգեղոսի, Հռիփսիմյան կույսերը Հռոմ քաղաքի արգելավանքի (կուսանոցի) միանձնուհիներից էին, որոնք Հայաստանում խոսում էին «ի բարբառ հռոմայեցւոց»[35]։ Իսկ Մովսես Խորենացուն վերագրվող «Պատմութիւն սրբոց Հռիփսիմեանց» զրվածքում նշվում է, որ Հռիփսիմյանք սկզբնապես Հռոմի Ս. Պողոս վանքի կուսանոցում էին, ապա փախան Ակեր-

---

29 Ն. Ադոնց, նշվ. աշխ., էջ 275, Ժան-Պիեռ Մահե, Ագաթանգեղոսի «Հայոց պատմությունը» և հունա-հռոմեական վեպը (Պատմա-բանասիրական հանդես, 1997, № 1, էջ 163)։

30 Օրինակ, ըստ Ագաթանգեղոսի, Հռիփսիմյանց 72 կույսերից 32-ը (կամ 37-ը) սրի են ենթարկվել (Ագաթանգեղոս, ԺԸ, էջ 107, ԺԲ, էջ 112), իսկ ըստ Վարքի, բոլոր կույսերը սպանվել են (Վարք, էջ 47)։ Հռիփսիմյանց վկայաբանության հին վրացերեն թարգմանության մեջ (ստեղծված մինչև VIII դ.) Հռիփսիմյանց նահատակների թիվը 38 է (Պ. Մուրպյան, Ագաթանգեղոսի հին վրացերեն խմբագրություններ, Ե., 1982, էջ 71)։ Հռիփսիմեի վարքը նմանության եզրեր ունի քրիստոնեության առաջին խոստովանուհու՝ Թեկլի կույսի վարքի հետ (տե՛ս Ժան-Պիեռ Մահե, նշվ. աշխ., էջ 165—166)։

31 Հմմտ. Լև, Երկերի ժողովածու, հ. 1, Ե., 1966, էջ 420։

32 Ագաթանգեղոս, Բ, էջ 114։

33 Վարք, էջ 48։

34 Յովհան Մամիկոնեան, էջ 73։

35 Ագաթանգեղոս, ԺԷ, էջ 103։

սանդրիա, հետո անցան Երուսաղեմ, նոր ապա Եդեսիայով եկան Հայաստան, ապաստանելով Բարձր Հայքի Դարանաղի գավառի Սեպուհ լեռան մի խորշում (որը հետագայում կոչվեց Մանեա այրք), իսկ այնտեղից անցան Հայաստանի մյուս գավառները[36]։ Մինչդեռ Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ և Ագաթանգեղոսի երկում Հռիփսիմյանց գործունեությունը չունի այդքան լայն շառավիղ։ Հ. Տաշյանի կարծիքով, Հռիփսիմյան կույսերը եկել էին Փոքր Հայքից[37]։ Հնարավոր է, որ Հռիփսիմյանք, հալածվելով Հռոմում, անցել են Փոքր Հայք, ապա Մեծ Հայք։ Պ. Անանյանի կարծիքով, Հռիփսիմյանց կույսերի նահատակությունը տեղի է ունեցել 313 թ., Կեսարիայում Գրիգոր Լուսավորչի ձեռնադրվելուց մեկ տարի առաջ[38], Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելուց 12 տարի հետո։ Սակայն անբնական կլիներ այդ թվականին քրիստոնեության ջերմեռանդորեն դորակցող հայոց թագավորի կողմից նման դաժան վերաբերմունքը Հռիփսիմյանց միանձնուհիների նկատմամբ։

Անշուշտ, Հռիփսիմյանց վկայաբանության մեջ արտացոլում են գտել նաև Հռոմեական կայսրությունում և նրա դաշնակից Հայաստանում քրիստոնյաների դեմ հարուցված անլուր բռնությունները, որոնք հաճախ իրականացվում էին այդ երկրների վեհապետերի փոխադարձ համաձայնությամբ և համադաշն գործողություններով։ Նկատելի է նաև վկայաբանության հեղինակի միտումը՝ Հռիփսիմյանց գործունեությունը առնչակցել Արևելքի միաբնակ եկեղեցական կենտրոնների (Ալեքսանդրիա, Եդեսիա) հետ, որի հետևանքով խիստ ընդլայնվել են նրանց քարոզչության ոլորտները։ Միաժամանակ, հարկ է նշել, որ վկայաբանությունը, ի դեմս այդ միանձնուհիների, նրանց ծավալած գործունեության, միմյանց հետ է հարակցում Ալեքսանդրիան, Եդեսիան և Հայաստանը։

Հայաստանում քրիստոնեության տարածման ընթացքում վճռորոշ դեր խաղացին քաղաքական գործոնները։ Հայաստանի անկախ գոյությունը երկու մրցակից հզորագոր պետությունների միջև ընթացող սուր հակամարտությունների պայմաններում հետզհետե դառնում էր դժվարին ու քաղաքական աղետահարույց ելևէջներով հագեցված խնդիր։ Անհրաժեշտ էր երկիրը, նրա ժողովրդին միավորել, համախմբել հոգևոր-քաղաքական նոր, հոգենորոգ գաղափարներով ու արժեքներով, որոնք պետք է Հայաստանն անջրպետեին օտար ազդեցությունից։ Հայոց թագավորի քաղաքական հաշվարկները տվյալ պարագայում ճիշտ էին։ Քրիստոնեությունը երկրում խոր արմատներ էր գցել։ Հայաստանում փաստորեն առկա էր երկծիր հավատք. պաշտոնականը՝ հեթանոսականը և հալածվող քրիստոնեությունը, որն ավելի կենսանորոգ բնույթ ուներ։ Այդ հանգամանքը պառակտում էր մտցնում երկրում, խաթարում նրա միասնական իրավակեցությունը, մեծապես սպառնալով նաև նրա քաղաքական և բարոյական միասնությանը։ Տրդատ III-ը հասկացավ, որ քրիստոնեությունը կարող է դառնալ Հայոց թագավորության հիմքերն ամրապնդող գաղափարաքաղաքական այն հիմնախարիսխը, որի շնորհիվ ստեղծված պայմաններում հնարավոր կդառնար ապահովել երկրի միասնությունը, անկախությունը։ Այս հանգամանքի ուժով Հայաստանում քրիստոնեությանը բացառիկ դեր էր վերապահված. այն անխուսափելիորեն դառնում էր քաղաքական կրոն, նպաստելով հայոց պետականության ամրապնդմանն ուղղված Տրդատ Մեծի նպատակա-

36 Տե՛ս Մովսիսի Խորենացւոյ Մատենագրութիւնք. Վենետիկ, 1865, էջ 298—302։

37 Յ. Տաշեան, Ագաթանգեղոս առ Գէորգայ Ասորի եպիսկոպոսի և ուսումնասիրութիւն Ագաթանգեղայ գրոց, Վիեննա, 1891, էջ 137։

38 Պ. Անանեան, Ս. Գրիգոր Լուսաւորչի ձեռնադրութեան թուականը և պարագաները (Բազմավէպ, 1960, էջ 103)։

սյաց ջանքերին։ Քրիստոնեությունը դարձավ հայրենասեր հոսանքի գաղափարաբանական հենարանը[39].

Հայաստանում քրիստոնեության նշանակությունը մեծացնելու համար անհրաժեշտ էր բարձրացնել հայոց հոգևոր առաջնորդի՝ Գրիգոր Լուսավորչի հեղինակությունը։ Անշուշտ, Գրիգոր Լուսավորչի պաշտամունքը ծագել է հետագայում, երբ պետականությունից զրկված Հայաստանում հույժ կարևորվեց եկեղեցու և նրա հիմնախնդիրների դերը, անհրաժեշտ դարձավ հիմնավորել հայոց հայրապետների քաղաքական գերազդեցիկ գործառնության անհրաժեշտությունը։ Գրիգոր Լուսավորչին վերագրված հրաշագործությունները, հատկապես Տրդատ III-ին խոզակերպ դարձնելը, այսահարված նախարարներին բժշկելը նույն նպատակն էին հետապնդում և, անշուշտ, հետագայում են մուծվել Ագաթանգեղոսի երկասիրության մեջ։ Թերևս Տրդատ III-ի խոզակերպ դառնալը վերհուշ է հեռավոր դիցաբանական անցյալի, երբ հունական ռազմի աստված Արեսը՝ Զևսի որդին, դարձավ վարազակերպ, որպեսզի սպանի բնության աստծուն՝ Ադոնիսին[40]։ Իհարկե, հենց Գրիգոր Լուսավորչի ժամանակ են դրվել Հայոց եկեղեցու և նրա առաջնորդի թե՛ հոգևոր-մշակութային և թե՛ դատաստանական իրավազորության հիմքերը։ Վերջինս, անշուշտ, չափազանցված է Ագաթանգեղոսի և Հովհան Մամիկոնյանի երկերում[41]։ Ըստ Ագաթանգեղոսի. Տրդատ արքան և նախարարները նույնիսկ հանձն են առնում առանց վերապահության կատարել Գրիգոր Լուսավորչի բոլոր հրամանները։ Վերջինիս դատաիրավական գերակայությունը շեշտում է նաև Հովհան Մամիկոնյանը, նշելով, որ Տրդատ թագավորը, անսալով Գրիգորին, ազատ էր արձակում կալանված հանցապարտներին։ Սակայն Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն դառնալու հանգամանքը ինքնին հոգևոր-եկեղեցական և դատաիրավական ոլորտներում առաջնակարգ դեր էր վերապահում հայոց թագավորին։ Ուշագրավ է, որ V դ. եկեղեցական մատենագիր Սոզոմենոսը միայն Տրդատին է վերագրում Հայաստանում քրիստոնեություն տարածելու մենաշնորհը[42]։

Հայաստանում քրիստոնեությունը պետականորեն ընդունելը հնարավոր դարձավ նաև շնորհիվ այն հանգամանքի. որ 298 թ. Մծբինում կնքված հռոմեա-պարսկական քառասնամյա պայմանագրից հետո Հայաստանն ապրեց խաղաղության պայմաններում, և գրեթե իսպառ դադարեցին Սասանյանների փորձերը՝ միջամտելու Հայաստանի ներքին գործերին, սատարելու հեթանոսությունը և պարսկամետ տարրերին։ Ըստ Մովսես Խորենացու, Գրիգոր Լուսավորիչը Ս. Թադեոս առաքյալի աթոռին է նստել Տրդատ Մեծի գահակալման 17-րդ տարում։ Պատմիչը նշում է նաև, որ Տրդատ Մեծը գահակալել է Դիոկղետիանոսի կայսեր գահակալության երրորդ տարում[43]։ Հ. Մանանդյանը Տրդատ III-ի գահակալության առաջին տարին համարում է 298 թ. և գտնում է, որ Գրիգոր Լուսավորիչը կաթողիկոս է դարձել 314 կամ 315 թ., ուստի հայոց դարձը կատարվել է այդ թվականներին[44]։ Ստ. Մալխասյանը Տրդատ III-ի գահակալումը դնելով 263 թ. և վկայաբերելով Մ. Խորենացու վերոնշյալ հաղորդումը, կարծում է, որ Գրիգորը կաթողիկոս է դարձել 279 թ., որը ըստ նրա, Հայաստանում

---

39 Ռ. Մանասերյան, Հայաստանը Արտավազդից մինչև Տրդատ Մեծ, Ե., 1997, էջ 171։

40 Ն. Ադոնց, Պատմական ուսումնասիրություններ, էջ 274։

41 Ագաթանգեղոս, Ճ, էջ 378, Յովհան Մամիկոնեան, էջ 58։

42 L. Duchesne, Early history of the Christian church, vol. III, London, 1960, p. 367.

43 Մովսես Խորենացի, II, ՂԱ, էջ 242, ՁԲ, էջ 224։

44 Հ. Մանանդյան, Երկեր, Բ, էջ 131։

քրիստոնեություն պետականորեն ընդունելու տարեթիվն է[45]։ Սակայն այս կարծիքը չի հաստատվում մատենագրական տվյալներով։ Ագաթանգեղոսի հավաստմամբ, Գրիգոր Լուսավորիչը Կեսարիայից Աթանագինես վկայի նշխարները բերել է Հայաստան. իր ձեռնադրվելուց հետո[46]։ Հայտնի է, որ Աթանագինեսը նահատակվել է 303 թ. հուլիսին[47]։ Հետևաբար, Գրիգորը նշխարները բերել է այդ թվականից հետո։ Հասկանալի է, որ մինչև այս արդեն կատարվել էր հայերի ամբողջական դարձը, որը տեղի է ունեցել Կեսարիայից Գրիգորի վերադառնալուց առաջ, ամենայն հավանականությամբ 301 թ. ամռանը[48]։ Հետևաբար, Գրիգոր Լուսավորչի՝ հայոց հայրապետ դառնալու մասին Մ. Խորենացու վերոհիշյալ հաղորդումը վերաբերում է ոչ թե Կեսարիայում Գրիգորի ձեռնադրությանը, այլ մինչև այդ հայոց կաթողիկոսի պաշտոնը նրա կողմից ժամանակավորապես վարելուն, որը պետք է կատարված լինի Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելուց քիչ հետո, 302 թվականին, երբ կառուցվեց նաև Էջմիածնի Մայր եկեղեցին։

Քրիստոնեության պետականացումը Հայոց թագավորությունում վերածեց Արևելքում այդ կրոնի կայուն միջնաբերդի, ամրապնդեր նրա հոգևոր-բարոյական և բաղաքական միասնությունը։ Այն դարձավ օտար տիրապետության դեմ հայ ժողովրդի պայքարի դաղափարական հոսող կովանոց։ Պատահական չէր, որ Ագաթանգեղոսի երկը գրվեց 450—451 թթ. ժողովրդական ապստամբության ժամանակ[49]։ Հայոց առաջատար ոգին լիցքավորվում էր քրիստոնեության հոգևորոգ դաղափարներով[50]։

О НЕКОТОРЫХ ВОПРОСАХ. СВЯЗАННЫХ С ПРОВОЗГЛАШЕНИЕМ ХРИСТИАНСТВА ГОСУДАРСТВЕННОЙ РЕЛИГИЕЙ

В. М. ВАРДАНЯН

Резюме

Принятию христианства в качестве государственной религии способствовала социальная и политическая ситуация, сложившаяся после заключения мира между Римом и Ираном в 298 г. Армянские исторические источники представляют Григория Просветителя в роли продолжателя деяний апостола Фаддея. Согласно Агафангелу (греческая редакция), Григорий Просветитель происходил из знаменитого армянского рода. В 301 г. царь Великой Армении Трдат III провозгласил христианство государственной религией, глубоко сознавая необходимость единой религии и церкви для консолидации и идейной общности народа и сохранения независимости своего царства. В силу этих обстоятельств христианство в Армении стало политической религией.

45 Ս. Մալխասյան, Ե՞րբ են հայերն ընդունել քրիստոնեություն (Էջմիածին, 1944, № 1, էջ 24—26)։

46 Ագաթանգեղոս, ՃԺԴ, էջ 422։

47 Մ. Ավերեան, Վարք և վկայաբանություն սրբոց, Ա, Վենետիկ, 1874, էջ 67։

48 Ն. Ադոնցը Հայոց ամբողջական դարձը դնում է 288 թ. (տե՛ս N. Adontz, Les vestiges d'un ancien culte en Armenie, „Melanges Franz Cümont", 1936, p. 513).

Մեկ այլ կարծիքի համաձայն, Հայոց դարձը պետք է տեղի ունեցած լինի Դիոկղետիանոսի հրաժարականից (305 թ.) մի քանի տարի հետո (տե՛ս M. Chaumont, Sur l'origine de saint Gregorie, p. 129).

49 G. Vinkler, Our present knowledge of the history of Agat'angelos and its Oriental Versions (REA. t. XIV, 1980, p. 125).

50 Է. Դանիելյան, Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու հոգևոր ակունքները և պատմական նշանակությունը, Ե., 1997, էջ 52—56։